ՍԴ3/0145/01/16
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը
/այսուհետև՝ դատարան/

Նախագահությամբ դատավոր Դ. Սարգսյանի
Քարտուղարությամբ Ժ.Խուրշուդյանի
Ա.Լալայանի
Հ.Օհանջանյանի
Մասնակցությամբ՝
Մեղադրող Հ.Կարապետյանի
Պաշտպան Ա.Հովհաննիսյանի
Տուժող Գ.Մովսիսյանի

2017 թվականի օգոստոսի 10-ին, դռնբաց դատական նիստում, Գորիս քաղաքում քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի՝
Աբել Մանվելի Ալեքսանյանի /ծնված՝ 25.02.1967 թվականին ՀՀ Սյունիքի մարզի Շաքե գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած՝ խնամքին 1 անչափահաս երեխա, նախկինում չդատված, չի աշխատում, հաշվառված և բնակվում է ՀՀ Սյունիքի մարզի Շաքե գյուղում, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, սույն գործով արգելանքի տակ է եղել 25.05.2016 թվականից մինչև 28.05.2016 թվականը, որպես խափանման միջոց է ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը.

1.Գործի դատավարական նախապատմությունը
Ըստ դատարան ուղարկված քրեական գործի նյութերի և մեղադրական եզրակացության՝
Գուրգեն Մովսիսյանը աշխատել է Սյունիքի մարզի Շաքե գյուղի բնակիչ Աբել Ալեքսանյանի՝ Սյունիքի մարզի Գորայք գյուղի <<Կոշաբուլաղ>> կոչվող արոտավայրում գտնվող անասնաֆերմայում և վերջինիս բարեկամ Արտաշես Գևորգյանի հետ պահել Աբել Ալեքսանյանի ոչխարները, գիշերել են այնտեղ գտնվող տնակ հանդիսացող ավտոբուսում: 2016 թվականի մայիսի 23-ին՝ առավոտյան, Աբել Ալեքսանյանը գտնվել է արոտավայրում և վերադառնալու ժամանակ լիցքավորելու նպատակով իր հետ Գորայք գյուղ է տարել արոտավայրում օգտագործվող երկու լապտերները և Գուրգեն Մովսիսյանի բջջային հեռախոսի մարտկոցը, որոնք թողել է իր բարեկամի տանը: Նույն օրը՝ ժամը 14-ի սահմաններում, Գուրգեն Մովսիսյանը լապտերները և բջջային հեռախոսի մարտկոցը վերցնելու նպատակով ձիով արոտավայրից գնացել է Գորայք և այնտեղ բնակվող բարեկամի տանը ճաշել, որտեղ օգտագործել է ալկոհոլ, այնուհետև հանդիպել ընկերոջը, հյուրընկալվել նրան և վերջինիս հետ հաց ուտելու ընթացքում նույնպես օգտագործել ալկոհոլ: Ժամը 16-ի սահմաններում գնալով Աբել Ալեքսանյանի բարեկամի տուն՝ վերցրել է իրերը, որոնցից հեռախոսը դրել է բաճկոնի ձախակողմյան գրպանը, իսկ լապտերները՝ ձիու խուրջինի գրպանը, այնուհետև մեկնել արոտավայր: Այդ ընթացքում Սիսիան քաղաքում գտնվող Աբել Ալեքսանյանը մի քանի անգամ զանգահարել է Գուրգեն Մովսիսյանին, սակայն վերջինս չի պատասխանել, քանի որ արոտավայր չհասած ճանապարհին բջջային հեռախոսը գրպանից ընկել է գետնին: Հասնելով արոտավայր՝ այնտեղ գտնվող Արտաշես Գևորգյանը Գուրգեն Մովսիսյանին հայտնել է, որ Աբել Ալեքսանյանը մի քանի անգամ զանգել է նրան, սակայն նա չի պատասխանել, որից հետո Գուրգեն Մովսիսյանը տեսել է, որ իր հեռախոսը գրպանում չէ: Այդ ընթացքում Աբել Ալեքսանյանը կրկին զանգահարել է Արտաշես Գևորգյանին, որին պատասխանել է Գուրգեն Մովսիսյանը, ով Աբել Ալեքսանյանին հայտնել է, որ հեռախոսը կորցրել է, որի պատճառով չի կարողացել պատասխանել զանգերին, որից հետո Աբել Ալեքսանյանն իր ավտոմեքենայով Սյունիքի մարզի Շաքե գյուղի բնակիչ Ասատուր Առաքելյանի հետ մեկնել է արոտավայր: Այդ ընթացքում Արտաշես Գևորգյանն ընթրելու նպատակով սեղան է բացել, որի վրա ուտելիքները կտրելու նպատակով դրված է եղել նաև Գուրգեն Մովսիսյանի ծալովի դանակը: Մոտ 20 րոպե անց Աբել Ալեքսանյանը և Ասատուր Առաքելյանը հասել են արոտավայր, որտեղ գտնվող տնակ-ավտոբուսում հեռախոսազանգերին չպատասխանելու և արոտավայր ուշ վերադառնալու հարցի շուրջ առաջացել է վիճաբանություն Գուրգեն Մովսիսյանի և Աբել Ալեքսանյանի միջև, որի ընթացքում վերջինս հայհոյել է Գուրգեն Մովսիսյանի մորը և ապտակել, որից Գուրգեն Մովսիսյանն ընկել է մահճակալին, որից հետո Աբել Ալեքսանյանը մոտեցել է Գուրգեն Մովսիսյանին, իսկ վերջինս հավաքել է Աբել Ալեքսանյանի հագուստի կրծքավանդակից: Այդ ընթացքում Աբել Ալեքսանյանը հարցրել է, թե

գառները առանձնացրել են, թե ոչ, ներկա գտնվող Արտաշես Գևորգյանը հայտնել է, որ ինքն առանձնացրել է:
Այնուհետև Աբել Ալեքսանյանը վերջինիս հրելով հանել է տնակից դուրս և միասին գնացել են մոտ 40 մետր հեռու գտնվող գառները պահելու վայր, իսկ Գուրգեն Մովսիսյանը և Ասատուր Առաքելյանը մնացել են տնակում: Մոտ 2-3 րոպե անց Աբել Ալեքսանյանը և Արտաշես Գևորգյանը վերադարձել են ավտոտնակ, Աբել Ալեքսանյանը մտել է ներս, իսկ Արտաշես Գևորգյանը մնացել է դրսում: Գուրգեն Մովսիսյանը, վախենալով, որ Աբել Ալեքսանյանը կմոտենա և կրկին կհարվածի իրեն, վերցրել է սեղանին դրված դանակը և պահել աջ ձեռքում, որը տեսնելով Աբել Ալեքսանյանը մոտեցել է Գուրգեն Մովսիսյանին, բռնել նրա դաստակից, սեղմելով վերցրել դանակը և հարվածել Գուրգեն Մովսիսյանի որովայնին՝ դիտավորությամբ պատճառելով որովայնի խոռոչի թափանցող, մեծ ճարպոնի, ստամոքսի պատի վնասումով կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս, որից հետո Աբել Ալեքսանյանը Ասատուր Առաքելյանի հետ Գուրգեն Մովսիսյանին տեղափոխել են <<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, իսկ ճանապարհին Աբել Ալեքսանյանը Գուրգեն Մովսիսյանին ասել է, որ վերջինս հիվանդանոցում հայտնի, որ վնասվածքն ստացել է արոտավայրում ձիուց վայր ընկնելու և դանակը որովայնը վնասելու հետևանքով:
25.05.2016 թվականին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Գրիգորյանի կողմից որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին /51103216/:
25.05.2016 թվականին որոշում է կայացվել Գուրգեն Մովսիսյանին թիվ 51103216 քրեական գործով որպես տուժող ճանաչելու մասին:
25.05.2016 թվականին Աբել Մանվելի Ալեքսանյանը ձերբակալվել է:
28.05.2016 թվականին որոշում է կայացվել Աբել Մանվելի Ալեքսանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:
28.05.2016 թվականին որոշում է կայացվել Աբել Մանվելի Ալեքսանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին, որը նույն օրը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ մերժվել է:
28.05.2016 թվականին որոշում է կայացվել Աբել Մանվելի Ալեքսանյանին արգելանքից ազատելու մասին:
28.05.2016 թվականի որոշմամբ Աբել Մանվելի Ալեքսանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:
01.07.2016 թվականին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի բաժնի պետ Ա.Հարությունյանի կողմից որոշում է կայացվել թիվ 51103216 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:
30.07.2016 թվականին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային վարչության ավագ քննիչ Ա.Գրիգորյանի կողմից որոշում է կայացվել թիվ 51103216 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:
11.08.2016 թվականին որոշում է կայացվել Գուրգեն Մովսիսյանի հագուստներից սև գույնի ջեմպրը, սև ու սպիտակ նախշերով վերնազգեստը, գիշերազգեստը, վերնազգեստը, գոտին և անդրավարտիքն իրեղեն ապացույց ճանաչելու մասին /իրեղեն ապացույցը պահվում է Սիսիանի քննչական բաժնի իրեղեն ապացույցների պահման սենյակում/:
17.08.2016 թվականին որոշում է կայացվել Աբել Մանվելի Ալեքսանյանին առաջադված մեղադրանքը փոփոխելու մասին:
18.08.2016 թվականին որոշում է կայացվել Աբել Մանվելի Ալեքսանյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2016 թվականի մայիսի 23-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Սյունիքի մարզի Գորայք գյուղի <<Կոշաբուլաղ>> կոչվող արոտավայրում գտնվող, իրեն պատկանող տնակ հանդիսացող ավտոբուսում, հեռախոսազանգերին չպատասխանելու պատճառով վիճաբանել է իր մանր եղջերավոր անասունների խնամքով զբաղվող Գուրգեն Մովսիսյանի հետ, ձեռքով հարվածներ հասցրել նրա դեմքին և դուրս եկել ավտոբուսից, իսկ այդ ընթացքում Գուրգեն Մովսիսյանը պաշտպանվելու նպատակով վերցրել է սեղանին բաց վիճակում գտնվող գրպանի ծալովի դանակը, որից հետո Աբել Ալեքսանյանը վերադառնալով և Գուրգեն Մովսիսյանի ձեռքում տեսնելով դանակը, բռնել է վերջինիս աջ ձեռքի դաստակը, սեղմելով վերցրել դանակը և հարվածել Գուրգեն Մովսիսյանի որովայնին՝ դիտավորությամբ պատճառելով որովայնի խոռոչի թափանցող, մեծ ճարպոնի, ստամոքսի պատի վնասումով կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս, որից հետո վերջինս տեղափոխվել է <<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ և վիրահատվել:
26.12.2016 թվականին ՀՀ Սյունիքի մարզի դատախազի տեղակալ Հ.Կարապետյանի կողմից որոշում է կայացվել մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին, և քրեական գործն ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ այն ստացվել է 09.01.2017 թվականին:
09.01.2017 թվականին քրեական գործն ընդունվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Դ.Սարգսյանի վարույթ:
23.01.2017 թվականին որոշում է կայացվել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին և դատական նիստ է նշանակվել 2017 թվականի փետրվարի 1-ին:

2.Ապացույցների հետազոտում և գնահատում

2.1. Ամբաստանյալ Աբել Մանվելի Ալեքսանյանը և՛ նախաքննության և՛դատաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ իր հիշելով, 2016 թվականի մայիսի 23-ին՝ առավոտյան 5000 դրամ գումար է տվել Գուրգենին և Արտաշին, ասել, որ ինչ անհրաժեշտ է գնեն և «բատարեկյաները» լիցքավորեն, որ լույս լինի: Օրվա ընթացքում բազմիցս փորձել է զանգել Գուրգենին, անհասանելի է եղել: Իր ընկերը Ասատուր Առաքելյանը զանգել է, ասել, որ խոզ է մորթել, գնա տանի Սիսիան, ինքը գնացել է: Երեկոյան զանգել ասել են, որ Գուրգենը եկել է, ինքը բարձրացել է սար: Գուրգենին տեսել է նստած, հարցրել է, թե որտեղ է եղել, նա ասել է, որ «լևի» է գնացել, ինչ է իրավունք չունի, այդ պահին ինքն ապտակել է նրան, հրել և նա ընկել է այնտեղ դրված մահճակալների արանքը: Եղանակը լավ չի եղել, Արտաշի հետ դուրս են եկել, տեսնելու գառներին առանձնացրել են, թե՝ ոչ: Երբ դուրս են եկել, Գուրգենը եղել է նստած վիճակում: Շուրջ 4-5 րոպե անց, 40 մետր գնալուց հետո, Արթուրը ձայն է տվել, որ Գուրգենն իրեն վնասել է: Ինքը սկզբում չի հավատացել, հետո երբ մոտեցել են, տեսել է, որ Գուրգենի փորի հատվածում վնասվածք կա, արյուն չի եղել, միայն ճարպի նման բան է նկատել: Արթուրի դիրքը չի հիշում, նա Գուրգենի մոտ է եղել: Գուրգենը հենված է եղել մահճակալին, երբ լույս են գցել, սպիտակ ճարպի նման նյութ է նկատել, արյուն չի եղել: Նրան անմիջպես տարել են հիվանդանոց: Ճանապարհին մի քանի տեղ կանգնել են, Գուրգենը սրտխառնոց է ունեցել, նրան դուրս գալ օգնել է Արթուրը՝ մեքենայից պահելով: Դանակն ինքը նախկինում տեսել է, ծալած վիճակում կլիներ 12 սմ, կարմիր պոչով դանակ է, իսկ դեպքի ժամանակ կամ հետո այն չի տեսել: Հետո փնտրել են, սակայն չեն գտել: Գուրգենին էլ են հարցրել դանակի մասին, նա ասել է, որ գցել է ավտոբուսի մոտ: Գուրգենն իր մոտ աշխատել է 5-6 տարի: Այդ ընթացքում մեկ անգամ է խմած եղել: Գիտի նաև, որ մեկ անգամ էլ տանն է խմած ինչ որ բան կոտրել՝ կինն է ասել և երբ ինքը հետաքրքրվել է, Գուրգենն ասել է, որ խմած է եղել, ջղայնացած, ջարդել է: Գուրգենի ընտանիքի հետ լավ հարաբերությունների մեջ է եղել, նրանց շատ է օգնել, թշնամություն չի եղել: Հիվանդանոց տանելուց Գուրգենին հարցրել են, թե ինչ է ասելու, պատասխանել է, որ ոչինչ ոստիկաններին ասելու է, որ ձիուց է ընկել: Ինքը չի մտածել նրան խորհուրդ տալ ճիշտն ասել: Արոտավայրում դեպքի վայրի զննություններին չի մասնակցել: Չգիտի, թե Գուրգենի հեռախոսն ինչ պայմաններում է գտնվել, նրա ասելով ձիով գնալիս ընկել է: Մովսիսյանի բուժման համար երբ բժիշկը գումար է ուզել, ինքն ասել է, որ պարտքով գումարը կտա: Արտաշը ոչխար է ուզել, հարցրել են Գուրգենին վաճառում է, թե ոչ, նա համաձայնել է վաճառել իր ոչխարները և գումարը տարել տվել են հիվանդանոց: Հիվանդանոցում սպասել են մինչև վիրահատությունն ավարտվի, իրենց հետ եղել են Թումանյան Աշոտը և Պետիկը: Գուրգենը ընդհանրապես խմել է, բայց երբևէ այդ վիճակում չի եղել: Ինչ որ Աշոտ անունով անձ նրան առաջարկել է այլ աշխատանք, մտածում է, միգուցե աշխատանքից է ցանկացել դուրս գալ, կոնկրետ չի կարող ասել, թե ինչու է իրեն մեղադրել Գուրգենը: Նրա ասելով ստիպել են: Չգիտի, թե Գուրգենի թշնամանքն իր նկատմամբ որտեղից է սկսվել: Ինքը Գուրգենին հարցրել է, թե ինչ է արել, ինչու է արել, նա չի պատասխանել, նրան տարել են հիվանդանոց, հետո ասել է չգիտի, թե ինչու է արել, խմած է եղել: Արոտավայրում հարցրել է, թե ինչու է իր դեմ ցուցմունք տվել, նա ասել է, որ ցանկացած պահի կարող է ցուցմունքը հետ վերցնել, դա քննիչն է նրան ասել, դրանք նրա բառերը չեն, Գուրգենին լավ է ճանաչում: Այդ օրը դանակն ընդհանրապես չի տեսել, երբ գնացել է սար, արդեն մութ է եղել: /տես՝ դատական նիստի արձանագրությունը/

2.2. Տուժող Գուրգեն Անուշավանի Մովսիսյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ որ դատավարության մասնակիցներից ճանաչում է ամբաստանյալին, միասին աշխատել են, նրա հետ լավ հարաբերությունների մեջ է: 2016 թվականի մայիսի 23-ին ինքը շատ խմած է եղել, Աբելն իրեն անընդհատ զանգել է, սակայն չի պատասխանել, հեռախոսն անջատած է եղել, բարձրացել է սար: Մութ է եղել, գիշեր է եղել: Երբ գնացել է ավտոբուսի մոտ, այնտեղ Արտաշն է եղել: Հետո Աբելն է եկել Արթուրի հետ: Աբելը գնացել է ջղայնացած հարցրել, թե ինչու չի պատասխանել, վիճաբանել են: Աբելը իրեն ապտակել է: Ընդհարման ժամանակ ցավ չի զգացել: Արտաշին հարցրել է գառներն առանձնացրել են, ինքն այնտեղ չի եղել, եղանակը լավ չի եղել, անձրև կարկուտ է եղել, պատասխանել է, որ մի քանիսին առանձնացրել է, սակայն ոչ բոլորին: Աբելն Արտաշի հետ դուրս է եկել տնակից, ինքը և Արթուրը մեքենայի մեջ են եղել: Վերցրել է դանակը, ինքն իրեն հարվածել: Իրեն տարել են հիվանդանոց: Դրանից հետո հարցաքննել են, ամեն անգամ նույն բանն է ասել, որ ինքն իրեն է վնասել: Որոշ ժամանակ անց իրեն կանչել են բաժնից: Բաժնում ասել են, որ պետք է գործն այնպես դասավորեն, որ Աբելն է հարվածել, չգիտի, թե ինչու են նման բան արել: Երբ ասել է, որ ինքն է իրեն վնասել, Վարդանյանն ասել է, որ գիտի ինչ է անում: Իրեն տարել են պետի մոտ, նա ասել է, որ ինչ ասի, այն էլ պետք է գրի: Իրեն երբ բաժին են տարել, վախեցած է եղել, կանչել են քննիչին, որպեսզի ցուցմունք վերցնի իրենից, նա ասել է, որ ցուցմունք չի վերցնելու: Ինքը ցուցմունք է տվել այն մասին, որ Աբելն է իրեն հարվածել: Ապաքինվելուց հետո գնացել է Ղարաբաղ աշխատելու: Ճշմարտությունն այն է, որ Աբելն իրեն չի հարվածել, ինքն է իրեն վնասել: Խմել է Գորայքում, գնացել է մորաքրոջ տուն, ապա ընկերոջ հետ է խմել: Այնքան խմած է եղել, որ ինքն իրեն վնասել է: Երեք բաժակ մորաքրոջ տանն է խմել, 22ից ավել ընկերոջ հետ են խմել, ընկերն ապրում է Գորայքում, անունը Ռոբերտ է, օրվա ժամը 3-ի 4-ի սահմաններում է եղել: Ճանապարհին ձիով գնալուց սրտխառնոց է զգացել: Գիշեր է եղել, գործ չի արել: Սար հասել է ժամը 10-ի սահմաններում, Գորայքից

մութն ընկնելու վրա է դուրս եկել: Դանակը փոքր սեղանի վրա դրված է եղել, վերցրել է և իրեն վնասել: Աբելի հետ վիճաբանել են այն պատճառով, որ նա իրեն ապրանք է վստահել, իսկ ինքը խմել է, ուշ է գնացել, ապրանքը թողել է անձրևի տակ, ինքը մեղավոր է: Իրենց միջև թեթևակի ընդհարում է եղել, Աբելը թեթև ապտակել է իրեն, ասել, որ իրեն ապրանք է վստահել, իսկ ինքը թողել գնացել է Բազարչայ: Իրար շորերից, դոշերից թեթևակի քաշքշել են, խմած է եղել, չի իմացել ինչու է անում: Աշխատանքային պարտականությունները չի կատարել, այդ պատճառով ապտակել է: Այդ ընդհարումն իր մոտ վախ չի առաջացրել, խմած է եղել, այդ պատճառով է իրեն վնասել: Այդ պահին չի պատկերացրել, թե ինչ է անում, Արթուրն իր մոտ է եղել: Երբ իրեն հարվածել է, Աբելին կանչել է Արթուրը, ասել, որ վնասվել է, իրեն տարել են հիվանդանոց: Ճանապարհին Արթուրին ասել է, որ մեռնի, երեխաներին նայի, պահի, չի հիշում, թե ինչ է պատասխանել: Հիվանդանոցում ասել է, որ ձիուց ընկել է, դանակը ձեռքին է եղել, ծակել է փորը, բայց այդպես չի եղել: Չգիտի, թե ինչու է նման բան ասել: Բաժնում ցուցմունք է տվել, ասել, որ ինքն է իրեն վնասել, Աբելը չի հարվածել: Չի հիշում բաժնում ձիուց ընկնելու փաստը պնդել է, թե՝ ոչ, բայց հիվանդանոցում այդպես է ասել: Իր հետևից մարդ են ուղարկել, բաժնի աշխատող, ում անունը չի հիշում: Երբ հասել են բաժնի դիմաց, իջել մեքենայից, եկել է Պետիկը, իրեն մի կողմ է քաշել, ասել, որ գործը պետք է գցի Աբելի վրա, որ նա է հարվածել: Նա ասել է, որ ինքը հանգիստ լինի, հիվանդանոցի ծախսերը նա է փակելու, ապրանքը տալու է: Ինքն է ասել, որ ոչխարների մեջ իր ոչխարներն էլ կան: Չգիտի, թե հետը ինչ է կատարվել, համաձայնել է, իրեն տարել են պետի մոտ, նա հարցրել է, թե խոսել են արդյոք Պետիկի հետ: Չգիտի, թե ինչու են իրեն տարել Վարդանյան Գագոյի մոտ, իրեն հարցեր է տվել, դրանից հետո տարել են պետի մոտ: Ինքը պետին ասել է, որ ինքն է իրեն վնասել, իրեն վախեցրել են, ասել է, որ իրեն վանդակի մեջ կգցի, ասել է ճիշտն ասի, հեքիաթ չպատմի: Պետը քննիչին կանչել է, ասել, որ ցուցմունք վերցնի, քննիչ Գրիգորյանը հրաժարվել է, ասելով որ մի անգամ վերցրել է, վերևից զանգել խայտառակել են, ուրիշը վերցնի: Պետը շեշտել է, որ ցուցմունքում նշի, որ Աբելն է իրեն հարվածել: Հարցաքննության ընթացքում այլ անձ չի եղել, ցուցմունքը քննիչն է գրել: Ինքը քննիչին չի պատմել Պետիկի, Վարդանյանի, պետի հետ խոսակցության մասին: Աբելի հետ առերես հարցաքննության ժամանակ ասել է, որ ինքն է հարվածել իրեն, հիվանդանոցում է եղել այդ ժամանակ: Ինքն Աբելին, նրա դեմ ցուցմունք տալու վերաբերյալ ոչինչ չի ասել, իրեն վատ է զգացել, որ անտեղի մեղադրել է Աբելին: Աբելին այդ մասին չի ասել: Երբ տղաներին պատմել է կատարածի մասին, ասել են, որ գնա իրականությունն ասի: Հետո Աբելին ասել է, որ շառ է արել, դա եղել է իրեն փորձաքննության կանչելուց առաջ: Կանչել են նկարել, չափել են, հարցեր են տվել: Այնտեղ ասել է, որ Աբելն է իրեն հարվածել: Քանի որ ցուցմունքն այդպես է տվել, այդ ժամանակ նույնպես նույն բանն է ասել: Չգիտի, թե դանակը որտեղ է, դա իրենն է եղել: Մինչև դատարան գալն իրեն ոչ ոք ցուցմունք տալու համար ճշում չի գործադրել, ոչինչ չեն ասել: Ինքը որևէ հոգեկան շեղումներ չունի, իրեն վնասելու այլ դեպքեր չեն եղել: Իրեն վնասելու պահին խմիչքի ազդեցության տակ է եղել: Փորձաքննության ընթացքում չի եղել, որ իրեն առաջարկեն ցույց տալ, թե ինչպես է ինքն իրեն վնասել: Հրապարակվեց տուժողի նախաքննական ցուցմունքները, որոնց համաձայն հանդիսանում է տուժող, իր մարմնական վնասվածքն ստանալու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով: Չի ցանկանում հարցաքննվել փաստաբանի ներկայությամբ: Ծնվել է Սյունիքի մարզի Սպանդարյան գյուղում, ներկայումս ընտանիքի հետ բնակվում է Շաքե գյուղում, չի աշխատում, պահում է Շաքե գյուղի բնակիչ Աբել Ալեքսանյանի ոչխարները Սյունիքի մարզի Գորայք գյուղի <<Ղոչաբուլաղ>> կոչվող վայրում: Մոտ 4 տարի պահել է նրա ոչխարները: Աբելն ունի մոտ 300 և ավելի գլուխ ոչխար և ինքը վարձատրվում է 80.000 ՀՀ դրամ: Ինքը Աբելի ոչխարները պահում է Շաքե գյուղի բնակիչ Արտաշի հետ, որի ազգանունը չգիտի: Ձմռան ամիսներին նշված վայրից գառներն իջեցնում են, իսկ ամռանը կրկին տանում են << Ղոչաբուլաղ>>: Այս տարի ոչխարները տարել են 2016 թվականի ապրիլի 30-ին, որտեղ պատրաստել են գիշերելու հատված և մնացել այնտեղ տարված տնակ հանդիսացող ավտոբուսի մեջ: 2016 թվականի մայիսի 21-ի առավոտյան Աբելը եկել էր սար, որպեսզի եզդիներին գառ վաճառեր: Աբելի գալուց հետո այնտեղ են եկել եզդիներ, որոնց ինքը չի ճանաչում: Աբելը նրանց վաճառել է 50 գլուխ գառ: Իջնելիս Աբելը նրանց տվել է 5000 ՀՀ դրամ, որպեսզի Գորայք գյուղից ուտելիք և ծխախոտ գնեն, բացի այդ ինքը Աբելին ասել է, որ լապտերների և իր հեռախոսի մարտկոցը անհրաժեշտ է լիցքավորել, տվել է նրան, որ նա Գորայք գյուղի իր մորաքրոջ որդու՝ Սերգեյ Գրիգորյանի տանը դնի լիցքավորման, կգնա կվերցնի դրանք: Նույն օրը ժամը 14:00-ի սահմաններում ձիով գնացել է Գորայք գյուղ, իսկ Արտաշը մնացել է ոչխարների մոտ: Ինքը Գորայք գնացել է հորաքրոջ՝ Նորա Մնացականյանի տուն, որտեղ նրա հետ զրուցել և հաց է կերել: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո դուրս է եկել տնից և գնացել ընկերոջ՝ Ռոբերտ Օհանյանի մոտ, ով Սիսիան-Երևան ավտոճանապարհի Գորայք գյուղի մոտ սունկ է վաճառում: Մոտ 10-15 րոպե երկուսով զրուցել են, որից հետո Ռոբերտը իրեն առաջարկել է միասին գնալ նրանց տուն հաց ուտելու, որին ինքը համաձայնել է ու գնացել են: Իրենք միասին ճաշել են և յուրաքանչյուրը խմել է 3 բաժակ օղի: Ժամը 16:00-ի սահմաններում Ռոբերտի տնից դուրս է եկել, գնացել Սերգեյի տուն, վերցրել իր հեռախոսը և երկու լապտերները, 1 բաժակ սուրճ խմել, հետո գնացել է Գորայք գյուղի խանութ, գնել սուրճ, կոնֆետ, երկու տուփ <<Գառնի>> և երկու տուփ <<Չիբուխ>> տեսակի ծխախոտ՝ Աբելի տված գումարով, որից հետո ձիով գնացել է արոտավայր: Ինքը հեռախոսը դրել է իր բաճկոնի ձախակողմյան գրպանում՝ դրսի կողմից, որի աստառը պատռված էր և չի հասկացել, թե ճանապարհին ինչպես է այն ընկել և որ հատվածում: Արդեն երեկոյան ժամ էր երբ հասել է սար, որտեղ իրենք գիշերում էին ավոբուսի մեջ: Հասնելով նշված տնակ Արտաշն ասել է, որ Աբելը զանգել էր և հարցնում էր, թե ինչու

հեռախոսին չի պատասխանում, ինքը ձեռքը տարել է գրպանը և տեսել, որ հեռախոսը այնտեղ չէ, հասկացել է, որ ճանապարհին ընկել է: Այդ ընթացքում Աբելը կրկին զանգել է Արտաշին և ասել է, թե ինչու Գուրգենը չի պատասխանում հեռախոսին և ինքը վերցրել ու ասել է, որ հեռախոսը կորցրել է: Աբելը ասել է, որ գտնվում է Սառնակունքում և գալիս է սար: Մութն արդեն ընկել էր երբ Աբելը հասել էր իրենց տնակ, ներս մտնելուց հետո, նա բարևել է: Այդ ժամանակ ինքը նստած էր աջ կողմում դրված մահճակալին և Աբելը եկել ու նստել է իր դիմաց, ավտոբուսի հետևի աջ թևի վրա: Նա իրեն հարցրել է, թե ինչու հեռախոսը չի վերցնում, որտեղ էր այդքան ժամանակ, ինչու էր ուշ եկել տնակ և ինքը ասել է, որ հեռախոսը մոտը չէ, այն կորցրել է, վաղը ման կգա ու կգտնի, բացի այդ ասել է <<լևի եմ գնացել>>, և Աբելը ասել է <<ղալաթ ես արել, որ գնացել ես>>, պատասխանել է, որ իրավունք չունի տեղ գնալու իսկ Աբելը ասել է, որ չունի և վիճաբանության ժամանակ իրեն հարվածել է, որից հետո ինքը «հավաքել է» նրա կրծքավանդակից, իսկ Աբելը սեռական բնույթի հայհոյանք է տվել և 3-4 անգամ ապտակել իրեն ու հետ հրել: Այդ ժամանակ Արտաշը կանգնած էր ավտոբուսի դռան մոտ և մոտեցել է, որ բաժանի, սակայն ինքը չի հիշում, թե Աբելը նրան հրել է, թե ապտակել ու ասել է, որ դուրս գա ավտոբուսից, դրանից հետո Արտաշը դուրս է եկել: Այդ տեսնելով ինքը վերցրել է ավտոբուսի մեջ գտնվող՝ կլոր սեղանի վրա դրված իր դանակը և Աբելին ասել, որ ձեռքը դանակ կա, թող հագստանա, որի ժամանակ Աբելը՝ ով իրենից մոտ 60 սմ հեռու էր և իր դիմաց էր կանգնած, ձեռքով բռնել է իր ձեռքը, որով բռնած էր դանակը և ինքը ձեռքը քաշել է, որովայնի ձախ շրջանում ծակոց է զգացել ու ընկել է գետնին և չի հիշում, միայն հիշում է, որ Աբելին ասել է, որ փորը ցավում է, Աբելն էլ ասել է, որ դիմանա հասնում են հիվանդանոց, ասել է նաև, որ ինքը ասի, թե ձիուց է ընկել: Դրանից հետո ինքը չի հիշում, միայն հիշում է որ գտնվում էր հիվանդանոցում: Դանակը դեպի իրեն է քաշել, որպեսզի Աբելը բաց թողնի իր ձեռքը: Դանակը բռնել է բռնակից՝ շեղբը դեպի առաջ: Ինքը չի կարող ասել, թե ինչպես է դանակը դեպի իրեն քաշելուց հարվածել որովայնին, երբ դանակի շեղբը գտնվել է դեպի առաջ: Ինքը չի հիշում, թե Աբելն իր ձեռքը բռնելուց հետո դանակի շեղբը, որ ուղղությամբ է թեքել: Իր կարծիքով Աբելն իրեն զանգել էր, որ իմանա տեղ հասել է, թե՝ ոչ: Վիճաբանության ժամանակ գառները և ոչխարները տեղավորելու խոսակցություն եղել է, Աբելը իրեն հարցրել է, իսկ ինքը հայտնել է, որ Արտաշը տեղավորել է: Նշված զրույցին ներկա է եղել Շաքե գյուղի բնակիչ Արթուրը, ով եկել էր Աբելի հետ: Արթուրն իրենց վիճաբանության ժամանակ կանգնած էր ավտոբուսի ներսում՝ դռան մոտ: Արթուրը փորձել է իրենց բաժանել և կողքից ասում էր <<Աբել մեծ մարդ ես, թարգը տուր>>: Չի հիշում վնասվածք ստանալու ժամանակ Արթուրը ներսում է եղել, թե՝ դրսում: Հարվածելու ժամանակ Աբելն Արտաշին դուրս էր հանել: Աբելն Արտաշին հրել և ավտոբուսից դուրս է հանել ու ինքը վերադարձել: Վիճաբանությունը տևել է մոտ 7-ից 8 րոպե: Ինքը Աբելի հարվածից գլխի ողջ շրջանում ֆիզիկապես ցավ է զգացել: Ինքը չի կարող ասել Աբելը խմած էր, թե՝ ոչ, նրանից արկոհոլի հոտ չի զգացել: Դանակը եղել է իրենը, այն պահել է անասուն մորթելու, ինչպես նաև հաց, պանիր և ուտելիք կտրելու համար: Դանակը եղել է ծալովի ունեցել է մոտ 15 սմ երկարություն, բռնակը մուգ կարմրավուն փայտից էր, շեղբը սրածայր էր: Աբելին հարվածելու նպատակ չի ունեցել, միայն ասել է, որ մոտիկ չգա, դանակը վերցրել է, որ նա դանակը տեսնելով հանգստանա, իսկ դանակով շարժումներ չի արել ընդամենը պահել է իր ձեռքում և չի փորձել նրան հարվածել: Արտաշին դուրս հանելուց հետո Աբելը գնացել է դեպի իրեն և այդ ժամանակ ինքը վերցրել է դանակը, որ նա մոտիկ չգնա, այն ժամանակ Աբելն իրենից մոտ 60 սմ հեռավորության վրա էր: Ինքը չի կարող ասել, թե Աբելը ինչու է վերադարձել: Երբ ինքը վերցրել է դանակը, այն եղել է բաց վիճակում՝ սեղանի վրա դրված: Ինքը չգիտի, թե որտեղ է գտնվում դանակը: Երբ դանակով վնասվածք է ստացել, ավտոբուսի մեջ եղել են ինքը և Աբելը: Աբելը ստել է, նա եղել է ավտոբուսի մեջ: Ինքը բռնել է դանակը, իսկ Աբելը բռնել է իր ձեռքից և ինքը ձեռքը քաշել է դեպի իրեն, որ ազատվի Աբելից, այդ ժամանակ չի հասկացել, թե ինչպես է վնասվածք ստացել, քանի որ դանակի շեղբը դեպի դուրս է բռնել: Ինքը Աբելից բողոք չունի, քաղաքացիական հայց չի ներկայացնում:
Համաձայն Գուրգեն Մովսիսյանի և Աբել Ալեքսանյանի առերես հարցաքննության արձանագրության, Գուրգեն Մովսիսյանը հայտնել է, որ երբ ինքը և Արտաշը գտնվել են ավտոբուսի մեջ այնտեղ են գնացել Աբելը և Ասատուրը, ում նաև Արթուր են անվանում: Ինքը նստած է եղել մահճակալին իսկ Աբելը եկել և նստել է իր դիմաց, որից հետո հարցրել, թե ինչի համար հեռախոսին չի պատասխանում: Ինքը հայտնել է, որ հեռախոսը կորցրել է, դրանից հետո հարցրել է, թե ուր է եղել և ինչու է ուշ գնացել սար: Ինքը պատասխանել է, որ լևի է գնացել, ինչ է դրա իրավունքը չունի: Նա ջղայնացել է իր խոսքերից և մի քանի անգամ՝ շուրջ 3 անգամ ապտակել, որից հետո ինքը հավաքել է նրա կրծքավանդակի շրջանի հագուստից և պահանջել հանգստանալ: Այդ ընթացքում հարցրել է, թե գառներն առանձնացրել եք, թե ոչ: Որից հետո իրեն հրելով Արտաշի հետ դուրս է եկել ավտոբուսից և գնացել դեպի գառների պահելու հատված, որն ավտոբուսից հեռու է շուրջ 30 մետր: Ինքը և Ասատուրը մնացել են ավտոբուսի մեջ: Ինքը տեսել է նրանց լապտերի լույսը, երբ հասել են գառների պահման վայրը: Այդ պահին ինքը գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ և չհասկանալով, թե ինչու վերցրել է սեղանին դրված իր ծալովի դանակը, որը տվյալ պահին բացված վիճակում է եղել և վերցնելուց հետո հարվածել է իր փորի շրջանում: Ինքը վերցրել է իր ձախ ձեռքով, շեղբը դեպի վեր և հարվածել է իր փորի շրջանում: Դրանից հետո չի հիշում, թե ինչ է կատարվել, միայն հիշում է, որ ճանապարհին էին և Աբելն ասել է հասնում ենք դիմացի: Այդ ժամանակ հարցրել է նաև, թե ինչ է ասելու, ինքը պատասխանել է, որ կասի ձիուց է ընկել: Իր վնասվածք ստանալու ժամանակ Աբելը ավտոբուսում չի եղել, նա Արտաշի հետ գնացել էր գառների պահման վայր: Դանակի գտնվելու վայրը չգիտի, իսկ հեռախոսի գտնվելու վայրը

հայտնել է մոտավոր: Նախորդ ցուցմունքների ժամանակ դեպքի հանգամանքները մանրամասն չի հիշել: Եղել է այնպես ինչպես նշեց քիչ առաջ: Ինքն է իրեն հարվածել և Աբելն իր վնասվածք ստանալու մեջ ոչ մի կապ չունի: Հայտնել է նաև, որ Աբել Ալեքսանյանը ճիշտ է նշում, իր վնասվածք ստանալու պահին նա ավտոբուսի մեջ չի եղել: Հրապարակվեց նաև տուժողի լրացուցիչ ցուցմունքը, որի համաձայն 2016 թվականի մայիսի 23-ի առավոտյան Աբել Ալեքսանյանը գնացել էր սար և այնտեղ եզդիներին վաճառել էր 50 գլուխ գառ, որից հետո իրեն և Արտաշին տվել էր 5000 ՀՀ դրամ և ասել էր, որ գյուղ իջնելուց ուտելիք գնեն: Քանի որ իրենց լապտերների և իր բջջային հեռախոսի մարտկոցները նստել էին, ինքը լապտերները և իր հեռախոսը տվել էր Աբելին, որպեսզի իր հետ տանի Գորայք գյուղ և դնի լիցքավորման, իսկ ինքը նույն օրը պետք է իջներ գյուղ և վերցներ: Նույն օրը՝ ժամը 13-ից 14:00-ի սահմաններում, ինքը ձիով իջել է Գորայք գյուղ, գնացել է հորաքրոջ՝ Նորա Մնացականյանի տուն, որտեղ զրուցել են, հաց կերել և ինքը 4 բաժակ օղի է խմել: Հետո դուրս է եկել և գնացել Գորայք գյուղի մոտ Երևան Մեղրի ավտոճանապարհին սունկ վաճառող ընկերոջ՝ Ռոբերտի մոտ, որտեղ մոտ 10-15 րոպե զրուցել են և նա իրեն հրավիրել է տուն հաց ուտելու, որին ինքը համաձայնել է: Այնտեղ միասին հաց են կերել և յուրաքնչյուրը 3 բաժակ օղի են խմել: Ժամը 16:00-ի սահմաններում ինքը գնացել է Աբելի բարեկամ՝ Սերգեյի տուն, որտեղ գտնվել են իրենց լապտերները և իր հեռախոսը: Այնտեղ 1 բաժակ սուրճ է խմել և դուրս եկել՝ վերցնելով լապտերները և հեռախոսը: Ինքը գնացել է Գորայք գյուղի խանութ, այնտեղից Աբելի տված գումարով գնել է սուրճ, կոնֆետ, երկու տուփ <<Գառնի>> և երկու տուփ <<Չիբուխ>> տեսակի ծխախոտ, որից հետո ձիով գնացել է արոտավայր: Հեռախոսը դրել էր իր բաճկոնի ձախակողմյան գրպանում, իսկ մնացածը դրել է ձիու խուրջինի մեջ: Արդեն մթնել է, երբ ինքը հասել է սար: Իրենց գտնվելու վայր չհասած հանել է հեռախոսը՝ իր հիշելով ժամ նայելու համար, որը կրկին գրպանը դնելուց հետո երևի ընկել էր գրպանից, քանի որ երբ հասել է իրենց տնակ Արտաշն ասել է, որ Աբելը զանգել է, ինչու չի պատասխանել: Ձեռքը տարել է գրպանը և տեսել, որ հեռախոսն այնտեղ չէ, հասկացել է, որ իր կողմից այն հանելուց և դնելուց հետո այն ընկել է: Այդ ընթացքում Աբելը զանգել է Արտաշին, ինքը վերցրել է Արտաշի հեռախոսը, Աբելն ասել է, թե ինչու հեռախոսը չի վերցնում, ասել է, որ կորցրել է: Աբելն ասել է, որ Սառնակունքում է և գնում է սար: Այդ ընթացքում Արտաշը սեղան է դրել, որ հաց ուտեն: Չանցած մոտ 20 րոպե Աբելը և Արթուրը՝ ում անունը Ասատուր է անձնագրով, ով Շաքե գյուղից է, մտել են ավտոբուս: Արտաշը վեր է կացել, նրա տեղը նստել է Աբելը՝ ավտոբուսի «կռիլոյին», իսկ ինքը նստած էր նրա դիմաց՝ մահճակալի վրա: Աբելը հարցրել է, թե ինչու ինքը զանգերին չէր պատասխանում, պատասխանել է, որ հեռախոսը կորցրել է, սակայն մոտավոր գիտի, թե այն որտեղ կարող էր ընկած լիներ ու ասել է, որ վաղը ման կգա և կգտնի, դրանից հետո Աբելը հարցրել է, թե ինչու է ուշ գալիս, ինքը ասել է. <<Լևի էի գնացել, ինչ է դրա իրավունքը չունեմ>>, որից հետո Աբելը բորբոքվել և մեկ անգամ ապտակել է դեմքին, ընկել է մահճակալին, հետո նա զայրացած մոտեցել է իրեն ու էլի հարվածել ու հայհոյել մորը, որից հետո ինքը «հավաքել է» նրա կրծքավանդանից և Աբելը զայրացած ասել է, որ իր շորերից դեռ որևէ մեկը «չի հավաքել»: Հետո Աբելը հարցրել է գառները ջոկել են, թե՝ ոչ, Արտաշն ասել է, որ նա ջոկել է: Աբելը Արտաշին հրելով դուրս է հանել և ասել. << Ջոկած չլինես սատկացնելու եմ>>, ու միասին գնացել են դեպի գառները պահելու վայր, իսկ ինքը և Արթուրը մնացել են ավտոբուսի մեջ: Մոտ 2-3 րոպե հետո Արտաշը և Աբելը վերադարձել են, երբ Աբելը մտել է ներս, Արտաշը մնացել է դրսում: Մինչ Աբելի ներս մտնելը ինքը վերցրել է բաց վիճակում սեղանին դրված իր ծալովի դանակը, քանի որ վախեցել էր, որ Աբելը կգա ու իրեն նորից կխփի, իսկ դանակը տեսնելով իրեն մոտիկ չի գնա: Ինքը դանակը վերցրել է աջ ձեռքով՝ շեղբը դեպի վերև: Դանակով որևէ շարժում չի արել և չի էլ փորձել նրան հարվածել, ուղղակի, ցանկացել է, որ դանակը իր ձեռքին տեսնի և մոտ չգնա: Սակայն Աբելը մոտեցել է իրեն և տեսնելով ձեռքերում գտնվող դանակը՝ ձեռքով բռնել է իր աջ ձեռքի աջ դաստակի սկզբնամասից և ուժեղ սեղմել, որից հետո ինքը թուլացրել է մատները ու Աբելը իր ձեռքից վերցրել է դանակը, հետո Աբելն ասել է. << այ ապուշ ինչու ես դանակը վերցրել>> ու հարվածել իր փորի շրջանին: Ինքը դրանից ծակոց է զգացել և ընկել գետնին: Արթուրը մոտեցել է, իրեն բարձրացրել և Աբելին ասել, որ փորը ծակվել է: Աբելն ասել է, որ դնեն մեքենայի մեջ և շուտ տանեն հիվանդանոց, որից հետո իրեն դրել են մեքենան և շարժվել: Սիսիանի ճանապարհին Աբելն ասել է, որ ինքը ասի, թե ձին խրթնել է, ինքն ընկել է ու դանակը մտել է փորը, քանի որ հիվանդանոցից հետո ոստիկաններ են գալու և հարցուփորձ անեն: Ինքը համաձայնել է և հիվանդանոցում այդպես է ասել: Չի հիշում, թե հիվանդանոցում ինչ է կատարվել, միայն հիշում է, որ վերակենդանացման բաժանմունքում է և իրեն վիրահատել են: Դեպքի հաջորդ օրը, երբ ինքը գտնվել է վերակենդանացման բաժանմունքում, իր մոտ է եկել Աբելը, ասել, որ այնպես անեն, որ <<ոչ շիշը վառվի, ոչ էլ քյաբաբը>>, որ երկուսն էլ քաշքշոցի մեջ չընկնեն: Աբելն իրեն ասել էր, որ հիվանդանոցի ծախսերը կհոգա և այդ պատճառով ինքը որոշել է նշել, որ ինքն իրեն է հարվածել: Աբելը նրան տվել է 245.000 ՀՀ դրամ, որը կազմում էր հիվանդանոցի ծախսը և ինքն այն տվել է բժիշկներին, հետո Աբելն ասել է, որ ինքը այդ փողը պետք է հետ վերադարձնի, եթե չվերադարձնի իր անասուններից կվերցնի: Ինքն Աբելի հոտի մեջ ունի 35 գլուխ գառ ու ոչխար: Այդ պատճառով որոշել է նշել իրականությունը այն մասին, որ Աբելն է իրեն հարվածել: Ինքը սկզբում սխալվել է, երբ ասել է, որ ձիուց է ընկել: Պետք է ճիշտը գրեր: Ճիշտ է իրենք պայմանավորվել էին, սակայն վերը նշված դեպքից հետո, ինքը որոշել է ճիշտը պատմել: Աբելի հետ առերեսման ժամանակ Աբելից վախեցել է և այդ պատճառով նշել է, որ Աբելն իրեն չի հարվածել, բացի այդ չի ցանկացել ավելորդ քաշքշուկի մեջ ընկնել: Ասել է իրականությունը և այն պնդելու է հետագայում: Մտածել է, որ գրպանի աստառը պատռված է եղել, այդ պատճառով այդպես է նշել, բացի այդ

դանակը ձախ ձեռքով բռնելը շփոթվել է: Երբ մինչև տեղ հասնելը նայել է հեռախոսին, Աբելի զանգերը չի տեսել: Չի հիշում, թե այդ պահին ժամը քանիսն էր: Ինքը չգիտի, թե որտեղ է գտնվում դանակը և Աբելի կողմից իրեն հարվածելուց հետո այն ինչ են արել: Պնդում է, որ Աբելն է իրեն հարվածել, իր իսկ դանակով:
Առկա հակասությունների վերաբերյալ տուժողը հայտնեց, որ հիվանդանոցում մնացել է մոտավորապես 11 օր: Դեպքից երկու օր հետո, երբ հիվանդանոցում ցուցմունք տալիս նշել է, որ դանակն իր ձեռքում է եղել, Աբելը ձեռքը բռնել ոլորել է, դանակը դիպչել է իրեն, սուտ է գրել: Հիվանդանոցում պառկած ժամանակ ցուցմունք տալիս քննիչից բացի ոստիկանության աշխատակից է եղել, սակայն չի հիշում ով է եղել, եթե տեսնի, կճանաչի, հետո նա դուրս է եկել, երբ ցուցմունք է տվել: Իրեն հարցեր են տվել, պատասխանել է, նա գրել է: Աբելից չի վախենում, այն, որ հայտնել է Աբելից վախենալով է լրացուցիչ ցուցմունք տվել, նույնպես սուտ է ասել: Նախաքննության ընթացքում բոլոր ցուցմունքները սուտ են եղել:
/Տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 42-47, 127-131/
2.3. Վկա Ասատուր Սեյրանի Առաքելյանը դատաննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ դատավարության մասնակիցներից ճանաչում է բոլորին, Գուրգեն Մովսիսյանն իր փեսայի եղբայրն է, Աբելն իր գյուղացին է, նրանց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ է: Կոնկրետ օրը չի հիշում, Աբելի հետ գնացել են սար: Գուրգեն Մովսիսյանը հարբած է եղել, նստած են եղել Արտաշի հետ: Աբելը Գուրգենին ասել է, թե ինչու զանգերին չի պատասխանել, որտեղ է եղել, նա ասել է, որ «լևի է գնացել, ինչ է իրավունք չունի», վիճաբանություն է եղել, Գուրգենը բռնել է Աբելի դոշերից: Այդ պահին Աբել Գուրգենին ապտակել է, ջղայնացել նրա վրա, որ նա գումար է տվել, ոչխար պահելու փոխարեն «լեվի է գնացել»: Հետո Աբելը Արտաշի հետ գնացել են ոչխարների մոտ: Ինքը Գուրգենին լավ է ճանաչում, նրա պահվածքից և օղու հոտից զգացել է, որ Գուրգենը հարբած է: Այդ պահին Գուրգենը վերցրել է դանակը, հարվածել է փորին: Երբ Գուրգենը դանակով ինքն իրեն վնասել է ինքը 3-4 մետր հեռու է եղել, նա ձայն է հանել, ինքը մոտեցել է, հեռախոսի լույսով տեսել, որ վնասվել է: Գուրգենը ասել է «վախ», մոտեցել է նրան, հարցրել ինչ է եղել, ասել է. «ես ինձի զարկամ», հեռախոսի լույսով տեսել է, որ Գուրգենի շորերը փորի հատվածում արյունոտ են: Մութ է եղել, չի տեսել, նրա ասելով դանակով է հարվածել և դանակը սեղանից է վերցրել: Երբ ինքը հարցրել է, թե ինչու է հարվածել, ասել է, թե չի հասկացել, որ վնասել է: Հարվածելու պահին ավտոբուսում գտնվել են միայն ինքն ու Գուրգենը: Այնուհետև ձայն է տվել Աբելին և հայտնել, որ Գուրգենն իրեն հարվածել է: Նրանք եկել են և տեսնելով, որ Գուրգենն իրեն հարվածել է նրան մեքենայով տեղափոխել են հիվանդանոց: Ճանապարհին Գուրգենն ասել է, որ երեխաներին լավ պահի: Երբ Աբելը հարցրել է, թե երբ նրան հարցնեն, ինչ է ասելու, ասել է, որ գործ չունի, ասելու է, որ ձիուց է ընկել: Հետագայում դանակը փնտրել են, սակայն չեն գտել: Դեպքի պահին շփոթված են եղել, նրան տարել են հիվանդանոց:
/տես դատական նիստի արձանագությունը/

2.4. Վկա Արտաշես Հրանտիկի Գևորգյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ դատավարության մասնակիցներից ճանաչում է տուժողին և ամբաստանյալին, նրանց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ է: Ինքը Գուրգենի հետ պահում է Աբելի ոչխարները և գառները: 2016 թվականի մայիս ամսին, կոնկրետ օրը չի հիշում, առավոտյան Աբել Ալեքսանյանը սարից իջնելուց իրենց 5000 դրամ է տվել, ասել, ինչ պետք է, գնեն: Գուրգենը վերադարձել է ուշ երեկոյան, ինքը հարցրել է, թե ինչու է ուշացել, որտեղ է եղել, նա խմած է եղել, ի վիճակի չի եղել պատասխանել հարցերին: Հաց են կերել, եկել է Աբելը, նստել Գուրգենի դիմաց, հարցրել, թե ինչու զանգերին չի պատասխանել, ասել է, որ հեռախոսը կորցրել է, թե ինչու է ուշացել, պատասխանել է, որ «լևի է գնացել», Աբելը թեթևակի ապտակել է ու այդ պահին Գուրգենը բռնել է նրա դոշերից, հետո հանդարտվել են: Ինքն Աբելի հետ, նրա պահանջով դուրս են եկել ավտոբուսից և գնացել գառների պահման վայր: Դեռ գառներին չհասած Արթուրը ձայն է տվել, ասելով, որ Գուրգենն իրեն հարվածել է: Անմիջապես հետ են գնացել և տեսել, որ Գուրգենը հենված է մահճակալին: Հարցրել են ինչու է նման բան արել, ասել է, որ գործ չունեն, ասելու է, որ ձիուց է ընկել: Նրան անմիջապես տեղափոխել են հիվանդանոց: Երբ Գուրգենը խմած եկել է, շատ հարցեր չի տվել, միայն պատասխանել է, որ մորաքրոջ տուն է գնացել, խմած լինելու պատճառով նորմալ հարցերին չի պատասխանել: Աբելի հարցերին Գուրգենը լկտի ձևով է պատասխանել, լավ չի կարողացել խոսել: Աբելն սկզբից հանգիստ է եղել, հետո երբ Գուրգենն այդ ձևով է պատասխանել, նա ջղայնացել է: Աբելը նստած տեղից թեթև ապտակել է այտին, երկուսն էլ նստած են եղել, հարվածից չի ընկել, ոտքի են կանգնել, Գուրգենը բռնել է Աբելի դոշերից: Սկզբում չի իմացել, թե Գուրգենն իրեն ինչով է հարվածել, նա հետո ասել է, որ դանակով է հարվածել: Դեպքից հետո դանակը չի տեսել, դա Գուրգենի ձեռքի դանակն է եղել, մինչ այդ օգտագործել է: Երբ Գուրգենին տարել են հիվանդանոց, ինքը մնացել է տնակում: Փնտրել է դանակը, սակայն չի գտել: Նրան հարցրել է, թե ինչու է պնդել, որ Աբելն է հարվածել, չի ամաչում, ասել է, որ ինքը չգիտի: Առաջինն ինքն է մտել, տեսել, որ ընկած է: Գիտեր, որ Գուրգենն այդտեղ անասուններ ունի, սակայն չգիտի ինչ պայմաններով են այնտեղ եղել, Գուրգենը հոտից ապրանք չի տարել: Դեպքից հետո դանակը չի տեսել: Երբ տուժողը վնասվածք է ստացել, ինքը և Աբել Ալեքսանյանը դրսում են եղել:
/տես դատական նիստի արձանագրությունը/

Դատաքննությամբ հրապարակվել և հետազոտվել են նաև հետևյալ ապացույցները.

2.5. Վկա Էդիկ Անուշավանի Մովսիսյանի նախաքննական ցուցմունքը, որի համաձայն ճանաչում է Գուրգեն Մովսիսյանին, նա իր եղբայրն է, նրա հետ լավ հարաբերությունների մեջ է, ճանաչում է նաև Աբել Ալեքսանյանին, նրա հետ նույնպես նորմալ հարաբերությունների մեջ է: 2016 թվականի մայիսի 25-ին գտնվել է Երևան քաղաքում, երբ իմացել է, որ եղբայրը՝ Գուրգենը սարում ձիուց ընկել է և դանակը մտել է փորը, գտնվում է Սիսիանի հիվանդանոցում: Այդ մասին իմանալուց հետո վերադարձել է Սիսիան, գնացել հիվանդանոց, որտեղ տեսել է Գուրգենին վերակենդանացման բաժանմունքում պառկած: Այնտեղ նրան հարցուփորձ է արել և Գուրգենն ասել է, որ ձիուց է ընկել, որին ինքը չի հավատացել և հորդորել է պատմել իրականությունը: Այդ ժամանակ Գուրգենը պատմել է, որ Աբելը զանգել է իրեն սակայն ինքը հեռախոսը կորցրած է եղել և չի պատասխանել, որի համար Աբելը սարում վիճել է նրա հետ և ծեծել նրան, որի ժամանակ Գուրգենը վերցրել է դանակը, որպեսզի Աբելն իրեն մոտ չգնա, սակայն վերջինս բռնել է Գուրգենի ձեռքը, պտտել է, և դանակը ծակել է Գուրգենին, որից հետո Աբելը և Արթուրը բերել են հիվանդանոց: Հետո իմացել է, որ Գուրգենը ցուցմունքը փոխել է և հայտնել, որ Աբելն իրեն չի խփել, այլ ինքն է իրեն դանակով խփել: Դրանից հետո իմացել է, որ Գուրգենը կրկին ցուցմունք է տվել և ասել, որ Աբելն է իր ձեռքից վերցրել դանակը և հարվածել որովայնին, որից հետո նրան տարել են հիվանդանոց: Սկզբում Գուրգենն ասել է, ձիուց է ընկել, քանի որ ճանապարհին Աբելի հետ այդպես էին պայմանավորվել, սակայն հետո զգացել է, որ Գուրգենն ինչ-որ բան է թաքցնում, նա խոստովանել է, որ Աբելն է հարվածել, իսկ ցուցմունքը փոխել է այն պատճառով, որ Աբելից վախեցել է: Վերջին ցուցմունքի ժամանակ պահանջել է Գուրգենից, որ նշի իրականությունը և նա հայտնել է, որ Աբելն է հարվածել: Իրականությունն այն է, որ Աբելը դանակով հարվածել է Գուրգենին: Այդ մասին իրեն Գուրգենն է պատմել ու ասել, որ Աբելն իրեն հայհոյել և խփել է: Գուրգենը ասել է, թե ինչու է Աբելը խփում, և Աբելը դանակը վերցրել և հարվածել է Գուրգենին, իսկ թե որտեղից և ինչպես, ինքն այլ մանրամասներից տեղյակ չէ, Գուրգենի պատմելով ներկա գտնվող Արթուրը խփելուց հետո մոտեցել է Գուրգենին, նայել է փորը և Աբելին ասել, որ Գուրգենի փորը ծակվել է: Ինքը տեղյակ չէ, թե որտեղ է գտնվում դանակը: Երբ Գուրգենը փոխել է իր ցուցմունքն այն մասին, որ Աբելն է իրեն հարվածել սկզբի օրերին 1 անգամ տեսել է Աբելին, ով ասել է, որ Գուրգենը ինքն է իրեն խփել, սակայն հետո, երբ Գուրգենը պատմել է, որ Աբելն է խփել, ինքն Աբելից հարցրել է ինչու է ասել, որ Գուրգենն ինքն իրեն է խփել, նա ասել է, որ Գուրգենն է ինքն իրեն խփել, այլ ոչ թե Աբելը: Իր կարծիքով Աբելն է Գուրգենին խփել, քանի որ նա դանակը թաքցրել է և չկա, եթե Գուրգենը խփած լիներ, դանակը կլիներ: Իսկ Աբելը թաքցրել է դանակը, քանի որ նա լավ գիտեր, որ եթե դանակը լիներ, մատնահետքերով կպարզեին, որ նա է եղել: Ինքը նշում է, որ Գուրգենի հիվանդանոցից դուրս գրվելուց հետո գյուղում տարածված խոսակցություններից լսել է, որ Աբելի ոչխարի հոտի մեջ գայլ է մտել: Այդ ժամանակ Գուրգենը իրենց տանն էր, որի ժամանակ Գուրգենը զանգել է Արտաշին և հարցրել, թե սարում գտնվող իր մոտ 30 գլուխ գառ-ոչխարի մեջ գայլ մտել է, թե՝ ոչ, Արտաշն ասել է, որ գայլը մտել է միայն Աբելի ոչխարի հոտի մեջ, Գուրգենի հոտին չի կպել: Գուրգենի պատմելով նշված օրը Գորայք գյուղի իրենց բարեկամի տանը մի քանի բաժակ օղի է խմել, սակայն Աբելը նույնպես խմած է եղել:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 246-249/

2.6. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ քրեական բնույթի մարմնական վնասվածքներով բերված անձանց հաշվառման հատուկ մատյանի զննության մասին 23.05.2016 թվականի արձանագրությունը, որի համաձայն մատյանի 34 էջի թիվ 42 համարի տակ գրանցված է Գուրգեն Անուշավանի Մովսիսյանը, ով հիվանդանոց է տեղափոխվել 2016 թվականի մայիսի 23-ին՝ ժամը 23:40-ին՝ «որովայնի առաջնային պատի կտրած-ծակած վերք» մարմնական վնասվածքով: Ըստ հիվանդին տեղափոխողի խոսքերի ձիուց ընկել է և դանակով վնասել որովայնը:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 2/
2.7. Գուրգեն Մովսիսյանի հագուստը ներկայացնելու մասին 24.05.2016 թվականի արձանագրութունը, որի համաձայն Ոստիկանության Սիսիանի բաժնի ՀՈԲ-ի տեսուչ, ոստիկանութայն կապիտան Վ.Մարտիրոսյանը, ընթերականեր Ս.Մկրտչյանի և Ն.Պողոսյանի մասնակցությամբ կազմել է արձանագրությունն այն մասին, որ 2016 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 10:30-ին, «Սիսիանի բ/կ» վիրաբուժական բաժանմունքում բուժքույր Արաքսյա Տիգրանի Խաչատրյանը ներկայացրել է ՍՄ Շաքի գյուղի բնակիչ Գուրգեն Անուշավանի Մովսիսյանի հագուստները, որն ըստ ներկայացնողի եղել է վերջինիս հագին բժշկական կենտրոն տեղափոխելու ժամանակ: Ներկայացվել է մեկ հատ տաբատ՝ շագանակագույն գույնի, որի վրա կա զինվորական գոտի պաշտպանական գույնի, մեկ հատ բաց մոխրագույն երանգով ներքնաշապիկ, որի առջևի հատվածը և թևերը երկայնական կտրված են, մեկ հատ սպիտակասևագույն նախշերով շապիկ (մայկա), առջևի և ձախ թևի հատվածը երկայնական կտրած, մեկ հատ սվիտր սև գույնի, առջևի հատվածը և թևերը կտրած (երկայնական), որի վրա կա սպիտակ, կարմիր գծերով նախշեր, մեկ հատ շագանակագույն ժակետ՝ ցեպով: Բացառությամբ սև սվիտրի, բոլոր հագուստների և գոտու վրա առկա է արնանման հետքեր: Նշված հագուստները տեղավորվել են սպիտակ գույնի տոպրակի «Maccoffe» գրառմամբ պոլիէթիլենային տոպրակի մեջ և փաթեթավորվել, կնիքվել է ոստիկանության Սիսիանի բաժնի «Ծրարների համար» նախատեսված կնիքով:

/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 4/
2.8. Դեպքի վայրի զննության մասին 24.05.2016 թվականի արձանագրությունը, որի համաձայն դեպքի վայրը գտնվում է Սյունիքի մարզի Գորայք գյուղի տարածքում, Գուրգեն Մովսիսյանի՝ մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նախապատրաստվող նյութերով, քանի որ նա ի վիճակի չի եղել բացատրություն տալ, քննիչը հարցազրույց է ունեցել նրա հետ, ով հայտարարել է, որ ինքը վնասվածքն ստացել է 2016 թվականի մայիսի 23-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, գտնվել է ոգելից խմիչքի ազդեցության տակ: Տեղանքը լավ չի հիշում, սակայն հայտնել է, որ վնասվածքն ստացել է Աբել Ալեքսանյանի ամառային անասնաֆերմա չհասած, դաշտամիջյան հողապատ ճանապարհի աջ հատվածում ձիուց վայր ընկնելու և ձեռքում եղած դանակը որովայնին կպնելու հետևանքով: Դանակն ու հեռախոսն ընկել են վնասվածք ստանալու վայրում: Նրա հայտարարության իսկությունն ստուգելու համար զննվել է նկարագրված տեղանքը: Այն գտնվում է Սյունիքի մարզի Գորայք գյուղից 3 կմ հեռավորության վրա՝ հյուսիսարևմտյան կողմում: Տեղանքը հանդիսանում է ամառային արոտավայրեր, տարածքն անվանվում է «Կոշաբուլախ»: Գուրգեն Մովսիսյանի նկարագրած վայրում, ճանապարհից 20 մ դեպի հյուսիս շուրջ 4 քառակուսի մետր մակերեսով, ջրափոսից 6 մ հեռավորության վրա կանաչածածկ քառակուսային 35×25 սմ չափսեր, գետնից մոտ 20 սմ բարձրությամբ քարի կողքին հայտնաբերվել է սև գույնի «Նոկիա» տեսակի բջջային հեռախոս: Այն ընկած է եղել էկրանով դեպի գետինը: Տեղանքի զննությամբ ջրափոսի ձախ հատվածում ավազի վրա տեսանելի են ձիու սմբակների հետքեր: Հեռախոսը հայտնաբերվել է կիսաքանդ շինության պատից մոտ 4 մ հեռավորության վրա: Հայտնաբերված հեռախոսը զննվել է տեղանքի զննության հետ: Հեռախոսը սև գույնի է՝ «Նոկիա» տեսակի: Հեռախոսն ունի 10.5×4.5 սմ չափերի մակերես: Հեռախոսն ունի 45 սմ բարձրություն, հեռախոսի մեջ առկա է դռևս չճտված բջջային քարտ: Հեռախոսը փաթեթավորվել և կնիքվել է ՀՈԲ բաժնի «Ծրարների համար» կնիքով և վերցվել հետագա ստուգումներ իրականացնելու նպատակով: Հեռախոսը վերցվելուց հետո շուրջ 3 մ հեռանալուց հետո հեռախոսին ստացվել են հաղորդագրություններ: Հեռախոսը հայտնաբերված վայրում բջջային կապ չէր գործում: Տեղանքի զննությամբ դեպքի համար նշանակություն ունեցող այլ իրեր և առարկաներ, հետքեր չեն հայտնաբերվել /կից առկա է ֆոտոաղյուսակ/:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 12-14/
2.9. Դեպքի վայրի լրացուցիչ զննության 25.05.2016 թվականի արձանագրությունը:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 31-35/
2.10. Անձնական խուզարկություն կատարելու մասին 25.05.2016 թվականի արձանագրությունը: Անձնական խուզարկության է ենթարկվել Աբել Մանվելի Ալեքսանյանը:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 52/
2.11. Հաղորդում ընդունելու մասին 26.05.2016 թվականի № 015986 արձանագրությունը, որի համաձայն Գուրգեն Մովսիսյանը հաղորդում է տվել այն մասին, որ 23.05.2016 թվականին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Գորայք գյուղի Կոշաբուլաղ կոչվող հատվածում Շաքե գյուղի բնակիչ Աբել Ալեքսանյանի հետ վիճաբանության ժամանակ վերցրել է իր դանակը, որպեսզի նա վախենա և մոտ չգա, սակայն նա բռնել է իր ձեռքը, որից հետո ինքը ձեռքը քաշել է դեպի իրեն փորձելով ազատվել նրանից, սակայն Աբելը ոլորել է ձեռքը և դանակով որովայնի շրջանում ստացել է մարմնական վնասվածք:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 65/
2.12. Փորձագետի 09.06.2016 թվականի № 0049/h եզրակացությունը, որի համաձայն քաղաքացի Գուրգեն Մովսիսյանի մարմնական վնասվածքները՝ ըստ բժշկական փաստաթղթերի և օբյեկտիվ ուսումնասիրության տվյալների՝ ճակատային շրջանի քերծվածքի, որովայնի շրջանի՝ ծակված-կտրված, որովայնի խոռոչ թափանցող, մեծ ճարպոնի, ստամոքսի պատի վնասումով վերքի ձևով, որն ուղեկցվել է՝ ներքին սուր արյունահոսությամբ և երկրորդ աստիճանի շոկով, պատճառվել են. ճակատային շրջանի քերծվածքը սուր ծայր կամ եզր ունեցող առարկայով կամ գործիքով, որովային շրջանի ծակված-կտրված վերքը՝ ծակող-կտրող առարկայով կամ գործիքով, հնարավոր է՝ որոշման մեջ նշված ժամկետին, որովայնի շրջանի ծակված կտրված վերքը՝ չի բացառվում նաև նախաքննությամբ պարզված հանգամանքներում, որոնք առաջացրել են առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Քաղաքացի Գուրգեն Մովսիսյանի որովայնի շրջանի ծակված կտրված վերքն իր անատոմիական տեղակայմամբ գտնվում է իր ձեռքերի հասանելիության սահմաններում: Ինչ վերաբերվում է այն հարցին, թե Գուրգեն Մովսիսյանը կարող էր ինքն իրեն պատճառել մարմնական վնասվածքները, ապա տվյալ հարցի պարզաբանումը անհրաժեշտ է պարզել քննչական գործողությունների ճանապարհով:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 150-151/
2.13. 15.06.2016 թվականի զննության արձանագրությունը, որի համաձայն զննության են ենթարկվել Գուրգեն Մովսիսյանի հագուստները, որով պարզվել է, որ թիվ 51103216 քրեական գործով Գորգեն Մովսիսյանի հագուստները զննելու նպատակով բացվել է փաթեթը, որն ամբողջական է: Փաթեթի մեջ առկա է մեկ հատ դարչնագույն ճարմանդով վերնազգեստ, որն ունի 54×43 սմ չափսեր, բրդից է, պարանոցի շրջանում առկա է պիտակ, որի վրա առկա է «BYONG» գրառում, վրան արնանման կամ այլ հետքեր, վնասվածքներ չեն եղել: Առկա է սվիտեր, որն ունի 65×48 սմ չափսեր, սև գույնի է, առջևից ունի նախշեր, արջևից ձախ կողմում ներքևից 11 սմ վերև առկա է 1.5 սմ

լայնքով կտրված: Առկա է մոխրագույն երկարաթև մայկա՝ սպիտակ օձիքով, այն ունի 52×45 սմ չափսեր: Առջից, ներքևից 6 սմ ներքև առկա է 1.3 սմ լայնությամբ կտրված, շուրջն առկա է չորացած արնանման հետք: Առկա է մոխրագույն երկարաթև ներքնաշոր, որն ունի 57×48 սմ չափսեր, առջևից 11 սմ վերև առկա է 1 սմ չափսով կտրվածք: Առկա է տաբատ, որը սև գույնի է, ունի 92×40 սմ չափսեր, վրան առկա է 3 սմ լայնությամբ մուգ կանաչ գոտի՝ ճարմանդով, որի ձախ հատվածում և տաբատի վերևի ձախ հատվածում առկա են արնանման չորացած հետքեր: Հագուստները փաթեթավորվել են և կնիքվել Սիսիանի ՓԲ «Փաթթեների համար» կնիքով: Բացի հագուստներից, սև գույնի անդրավարտիքի աջ գրպանում առկա է սև գույնի ականջակալներ, որոնց վրա արնանման հետքեր չեն հայտնաբերվել, այն կցվել է նույն փաթեթի մեջ և կնքվել փաթեթը:
/տես դատական նսիտի արձանագրությունը և գործ թերթ 161/
2.14. Զննություն կատարելու մասին 30.06.2016 թվականի զննության արձանագրությունը: Զննության են ենթարկվել հեռախոսային միացումների վերծանումները:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 197/
2.15. 05.08.2016 թվականի փորձագետի թիվ 238 եզրակացությունը, որի համաձայն.
1. Փորձաքննության ներկայացված Գուրգեն Մովսիսյանից վերցված արյան նմուշն ըստ արյան ABO իզոշճաբանական համակարգի պատկանում է արյան 0 խմբին:
2. Փորձաքննության ներկայացված Աբել Ալեքսանյանից վերցած նմուշն ըստ արյան ABO իզոշճաբանական համակարգի պատկանում է արյան A խմբին:
3. Փորձաքննության ներկայացված Գուրգեն Մովսիսյանի սև գույնի ջեմպրի, սև ու սպիտակ նախշերով վերնազգեստի, գիշերազգեստի վերնազգեստի, գոտու և անդրավարտիքի վրա առկա կասկածելի արնանման հետքերում հաստատվեց մարդկային ծագման արյան առկայություն, որն ըստ արյան ABO իզոշճաբանական համակարգի առաջացել են արյան O խումբ ունեցող որևէ անձից կամ անձանցից, այդ թվում, հնարավոր էր առաջանար Գուրգեն Մովսիսյանից:
4. Փորձաքննության ներկայացված շագանակագույն վերնազգեստի, թաշկինակի և սև գույնի ականջակալների վրա մանրակրկիտ զննությամբ արնանման կասկածելի հետքեր չեն հայտնաբերվել:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 214-217/
2.16. 13.12.2016 թվականի փորձագետի համար 16-2553 եզրակացությունը, որի համաձայն.
1.2.3. Փորձաքննությանը ներկայացված Գուրգեն Մովսիսյանի սև երանգի սվիտերի և երկարաթև մայկաների վրա առկա ծակած-կտրած բնույթի մեկական վնասվածքները (մանրամասն նկարագրությունը և տեղակայությունը տես «Հետքաբանական մաս»-ում) առաջացել են միակողմանի սուր սայր ունեցող ծակող-կտրող գործիքի՝ դանակի մեկ ներգործությունից:
Փորձաքննությանը ներկայացված Գուրգեն Մովսիսյանի սև երանգի սվիտրի, մոխրագույն մայկայի և երկարաթև մայկայի առաջամասի վրա առկա վնասվածքին համապատասխան՝ ներկայացված ժակետի վրա ծակած-կտրած բնույթի վնասվածքի բացակայությունը կարող էր պայմանավորված լինել վնասվածքն ստանալու պահին մարմնի տվյալ շրջանը ժակետով ծածկված չլինելու հանգամանքով:
Փորձաքննությանը ներկյացված Գուրգեն Մովսիսյանի անդրավարտիքի վրա առկա վնասվածքները (մանրամասն նկարագրությունը և տեղակայությունը տես «Հետքաբանական մաս»-ում) չունեն առաջացման թարմ բնույթ և կարող էին առաջանալ հագուստի տևական շահագործման ընթացքում:
4.5.6.7. Ելնելով Գուրգեն Մովսիսյանին պատճառված որովայնի առաջային պատի ձախ կեսի՝ միջին գծից 5,0 սմ ձախ, պորտի մակարդակից 3,5 սմ վեր տեղակայությամբ ծակած-կտրած, որովայնի խոռոչ թափանցող, մեծ ճարպոնի և ստամոքսի պատի վնասումով վիրավորման, ինչպես նաև փորձաքննությանը ներկայացված նրա սվիտերի և երկու երկարաթև մայկաների առաջամասերի վրա առկա մեկական ծակած-կտրած վնասվածքների բնույթից, տեղակայություններից և դիրքերից, համադրելով այդպիսիք միմյանց հետ, գտնում են, որ դրանք իրենց բնույթով տեղակայություններով և առաջացման մեխանիզմով համապատասխանում են միմյանց և պատճառվել են միակողմանի սուր սայր և ըստ խորաթափանցման մակարդակի շեղբի համապատասխան (մինչև մոտ 13-15 մմ լայնությունը չգերազանցող) լայնություն ունեցող ծակող-կտրող գործիքի՝ դանակի անմիջական ուղղորդված ներգործությունից: Նշված մարմնական և հագուստների վնասվածքներն ստանալու պահին Գուրգեն Մովսիսյանը և վնասվածք պատճառողը տարածության մեջ կարող էին գտնվել այնպիսի փոխադարձ դիրքում, որը հնարավորություն կտար սուր ծակող-կտրող գործիքի շեղբի, նրա որովայնի առաջային պատի ձախ կեսի նկատմամբ առաջից հետ, վարից վեր ուղղությամբ մեկ անմիջական ուղղորդված ներթափանցող ներգործություն, հնարավոր է, վնասվածք պատճառողի նկատմամբ Գուրգեն Մովսիսյանի նշած դեմ դիմաց կանգնած կամ դրան մոտ փոխադարձ դիրքի պայմաներում: Ներկայացված հագուստներից պոլիմերային ամրաշղթայով կոճկվող ժակետի վրա մյուս հագուստների և մարմնական վնասվածքին համապատասխան ծակած-կտրած բնույթի վնասվածքի բացակայությունը կարող էր պայմանավորված լինել մարմնական և մյուս հագուստների ծակած-կտրած վնասվածքն ստանալու պահին տվյալ ժակետի առաջամասը կոճկված չլինելու և որովայնի առաջային պատի ձախ կեսի վնասված շրջանը ծակած չլինելու հանգամանքով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե Գուրգեն Մովսիսյանը կարող էր արդյոք ինքն իրեն պատճառել տվյալ մարմնական և հագուստների վնասվածքները, թե՝ ոչ, ապա քանի որ սույն փորձաքննության շրջանակներում Գուրգեն Մովսիսյանին առաջարկված պայմանական դանակի կիրառմամբ ինքն իրեն վնասվածք հասցնելու մեխանիզմը, թե դանակը կոնկրետ որ ձեռքում է բռնած եղել, իր որովայնի առաջային պատի նկատմամբ ինչպիսի փոխադարձ դիրքով շեղբի բութ ու սուր կողմերի ինչպիսի ուղղվածությամբ, չի ցուցադրվել՝ պատճառաբանելով, որ ինքն իրեն չի հասցրել տվյալ վնասվածքը, այլ այն իրեն պատճառվել է մեկ այլ անձի կողմից, ոստի տվյալ դեպքում սատացած վնասվածքի՝ ինքն իրեն պատճառելու մեխանիզմի հնարավորությունը սույն փորձաքննության իրականացման շրջանակներում վերլուծել հնարավոր չէ:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 269-278/
Դատաքննությամբ հրապարակվել և հետազոտվել են նաև՝
2.18. Ինֆորմացիոն կենտրոնից ստացված տեղեկանքը՝ հնարավոր դատվածությունների վերաբերյալ:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 85/
2.19. Շաքի համայնքի ղեկավարի կողմից Աբել Ալեքսանյանին 27.05.2016 թվականին տրված բնութագիրը:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 94/
2.20. Շաքի համայնքի ղեկավարի կողմից Աբել Ալեքսանյանին ընտանիքի կազմի վերաբերյալ տրված տեղեկանքը:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 95/
2.14. «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից ստացված վերծանումները:
/տես դատական նիստի արձանագրությունը և գործ թերթ 192-196/
Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքները վերականգնելու և դրա արդյունքում ամբաստանյալին մեղսագրված արարքը նրա կողմից կատարած կամ չկատարած լինելու մասին դատարանի հետևությունները պետք է բխեն միայն քրեական գործի դատական քննության ընթացքում իրավական պատշաճ ընթացակարգի պահպանմամբ հետազոտված, ուսումնասիրված ապացույցների բավարար ամբողջությունից:
Քրեական գործի դատական քննության ընթացքում ուսումնասիրվել և հետազոտվել են հետևյալ ապացույցները.
2.1. Ամբաստանյալ Աբել Մանվելի Ալեքսանյանի դատաքննական ցուցմունքը,
2.2. Տուժող Գուրգեն Անուշավանի Մովսիսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները,
2.3. Վկա Ասատուր Սեյրանի Առաքելյանի դատաքննական ցուցմունքը,
2.4. Վկա Արտաշես Հրանտիկի Գևորգյանի դատաքննական ցուցմունքը,
2.5. Վկա Էդիկ Անուշավանի Մովսիսյանի նախաքննական ցուցմունքը,
2.6. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ քրեական բնույթի մարմնական վնասվածքներով բերված անձանց հաշվառման հատուկ մատյանի զննության մասին 23.05.2016 թվականի արձանագրությունը,
2.7. Գուրգեն Մովսիսյանի հագուստը ներկայացնելու մասին 24.05.2016 թվականի արձանագրութունը,
2.8. Դեպքի վայրի զննության մասին 24.05.2016 թվականի արձանագրությունը,
2.9. Դեպքի վայրի լրացուցիչ զննության 25.05.2016 թվականի արձանագրությունը,
2.10. Անձնական խուզարկութոյւն կատարելու մասին 25.05.2016 թվականի արձանագրությունը,
2.11. Հաղորդում ընդունելու մասին 26.05.2016 թվականի № 015986 արձանագրությունը,
2.12. Փորձագետի 09.06.2016 թվականի № 0049/h եզրակացությունը,
2.13. 15.06.2016 թվականի զննության արձանագրությունը,
2.14. Զննություն կատարելու մասին 30.06.2016 թվականի արձանագրությունը,
2.15. 05.08.2016 թվականի փորձագետի թիվ 238 եզրակացությունը,
2.16. 13.12.2016 թվականի փորձագետի համար 16-2553 եզրակացությունը:
Սա է քրեական գործով ձեռք բերված ապացույցների այն զանգվածը, որի հետազոտման հիման վրա ինչպես դատավարության կողմերը, այնպես էլ դատարանը պետք է գան այն համոզման՝ եզրահանգման, թե արդյոք ամբաստանյալը կատարել է այն արարքը, որը մեղսագրված է նրան:
Դատարանն արձանագրում է, որ վերը նշված բոլոր ապացույցները ձեռք են բերվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, այդպիսիք թույլատրելի են, վերաբերելի և դրանք իրենց համակցությամբ բավարար գործի լուծման համար:
Սույն գործով ամբաստանյալ Աբել Ալեքսանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:
Ամբաստանյալը հերքում է իր առնչակցությունը առաջադրված մեղադրանքին:
Սույն գործի քննությամբ դատարանը պետք է պատասխանի ստորև ներկայացված երկու հարցերին՝
ա/ Գուրգեն Մովսիսյանի առողջությանը պատճառվել է արդյոք կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս, թե ոչ, եթե այո, ապա
բ/ տվյալ վնասվածքները պատճառվել են արդյոք Աբել Ալեքսանյանի կողմից դիտավորությամբ կատարված գործողությունների արդյունքում:

Ստորև դատարանը դատաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների՝ ապացույցների, վերլուծությամբ, դրանք, մեկը մյուսի հետ համադրելով, պատասխանում է իր առջև դրված ա/ հարցին՝
Այսպես.
Գործում առկա և դատարանում հետազոտված 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 2.7, 2.12 ապացույցների համաձայն՝ Գուրգեն Մովսիսյանին 2016 թվականի մայիսի 23-ին պատճառվել է մարմնական վնասվածք, որն ըստ 2.12. ապացույցի առաջացրել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող: Այսինքն գործում առկա է հավաստի ապացույց, որ Գուրգեն Անուշավանի Մովսիսյանի առողջությանը պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս: Դատարանն իր առջև դրված ա/ հարցին պատասխանում է, որ այո 2016 թվականի մայիսի 23-ին Գուրգեն Մովսիսյանի առողջությանը պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս:
Առաջադրված ա/ հարցին դրական պատասխանելուց հետո, դատարանը պատասխանում է նաև բ/ հարցին Բազմակողմանի, օբյեկտիվ ստուգման ենթարկելով 2.1., 2.2., 2.3., 2.4., ապացույցները, վերլուծելով դրանք, համադրելով մեկը մյուսի հետ դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Աբել Մանվելի Ալեքսանյանի կողմից Գուրգեն Մովսիսյանին կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս պատճառելը հիմնավորող բավարար հիմքեր չկան: Դատարանի նման հետևությունը հիմնված է քրեական գործով ձեռք բերված հետևյալ փաստերով՝.
Ամբաստանյալ Աբել Ալեքսանյանը, գործով վկաներ Ասատուր Առաքելյանը և Արտաշես Գևորգյանը նախաքննական մարմնին և դատարանին Գուրգեն Մովսիսյանի վնասվածք ստանալու վերաբերյալ տվել են նույնաբովանդակ ցուցմունքներ, որով հայտնել են, որ տուժող Գուրգեն Մովսիսյանին դնակով ամբաստանյալը չի հարվածել: Տուժող Գուրգեն Մովսիսյանը նախաքննության ընթացքում բազմաթիվ անգամներ փոխել է իր ցուցմունքները և իր կողմից վնասվածքներ ստանալու վերաբերյալ հայտնել տարբեր վարկածներ: Տուժողը դատարանում հրաժարվելով նախաքննության ընթացքում տրված բոլոր ցուցմունքներից հայտնեց, որ Աբել Ալեքսանյանն իրեն դանակով չի հարվածել և մարմնական վնասվածք չի պատճառել: Տուժողի կողմից նախաքննության ընթացքում և դատարանում դրսևորած վերը նշված վարքագիծը դատարանին թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ նրա կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներն անարժանահավատ են: Գործով ամբաստանյալի /2.1./, ականատես վկաների /2.3., 2.4./ ցուցմունքներն ու տուժող Գուրգեն Մովսիսյանի դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները նույնական են և այդ ապացույցներով հիմնավորվում է, որ Գուրգեն Մովսիսյանին վնասվածք պատճառելու պահին ամբաստանյալը ավտոբուսի մեջ, այսինքն տուժողի մոտ չի եղել, այսինքն տուժող Գուրգեն Մովսիսյանին դանակով չի հարվածել և մարմնական վնասվածք չի պատճառել: Իսկ ինչ վերաբերվում է վկա Էդիկ Մովսիսյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքին, ապա դատարանն արձանագրում է, որ վկա Էդիկ Մովսիսյանը իր ցուցմունքում հայտնել է, որ դեպքի վերաբերյալ փաստական հանգամանքներին տիրապետում է միայն եղբոր Գուրգեն Մովսիսյանի պատմելով: Այսինքն, վկան հայտնել է այն տվյալները, որոնք իրեն հայտնել է Գուրգեն Մովսիսյան, ով դատարանում հրաժարվելով իր ցուցմունքներից հայտնեց, որ դրանք իրականություն չեն եղել:
Այսինքն, սույն քրեական գործի դատաքննությամբ չհիմնավորվեց, որ Գուրգեն Մովսիսյանին պատճառված կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնասը պատճառվել է Աբել Մանվելի Ալեքսանյանի կողմից, այլ ընդհակառակը հերքվեց:
Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել ոչ միայն փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն, այլև առհասարակ որևէ ապացույց առ այն, որ Աբել Մանվելի Ալեքսանյանի հանցավոր գործողությունների արդյունքում է Գուրգեն Մովսիսյանին պատճառվել առողջության ծանր վնաս:

3.Դատարանի իրավական վերլուծությունները
Աբել Մանվելի Ալեքսանյանին նախաքննական մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրվել է հետևյալ մեղադրանքը՝
«Աբել Մանվելի Ալեքսանյանը 2016 թվականի մայիսի 23-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Սյունիքի մարզի Գորայք գյուղի <<Կոշաբուլաղ>> կոչվող արոտավայրում գտնվող, իրեն պատկանող տնակ հանդիսացող ավտոբուսում, հեռախոսազանգերին չպատասխանելու պատճառով վիճաբանել է իր մանր եղջերավոր անասունների խնամքով զբաղվող Գուրգեն Մովսիսյանի հետ, ձեռքով հարվածներ հասցրել նրա դեմքին և դուրս եկել ավտոբուսից, իսկ այդ ընթացքում Գուրգեն Մովսիսյանը պաշտպանվելու նպատակով վերցրել է սեղանին բաց վիճակում գտնվող գրպանի ծալովի դանակը, որից հետո Աբել Ալեքսանյանը վերադառնալով և Գուրգեն Մովսիսյանի ձեռքում տեսնելով դանակը, բռնել է վերջինիս աջ ձեռքի դաստակը, սեղմելով վերցրել դանակը և հարվածել Գուրգեն Մովսիսյանի որովայնին՝ դիտավորությամբ պատճառելով որովայնի խոռոչի թափանցող, մեծ ճարպոնի, ստամոքսի պատի վնասումով կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս, որից հետո վերջինս տեղափոխվել է <<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ և վիրահատվել»:
ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում դիտավորությամբ

առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝
<<(…)3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:
4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (…):>>
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <<Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ>>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման (…)՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ <<Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝
1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).
2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.
3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.
4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.
5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները.
6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով>>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝
<<1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:
2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ>>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ <<Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին տալիս է հաստատող պատասխաններ>>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի համաձայն՝
<<1. Արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ:
2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:
3. Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը:
4. Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ>>:
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավճիռ կայացնելիս դատարանը լուծում է այն հարցը, թե ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը: Այսինքն՝ տվյալ դեպքում Դատարանը պետք է իրավական գնահատական տա այն հարցին՝ արդյոք ապացուցված է Աբել Ալեքսանյանի կողմից իրեն վերագրվող արարքի կատարումը:
ՀՀ Վճռաբեկ դատարանը Արարատ Ավագի Ավագյանի վերաբերյալ գործով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ <<<Ապացույցների բավարարություն>> հասկացության էությունը, ապացույցների բավարարությունը որոշելու ընդհանուր չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը Վճռաբեկ դատարանը քննարկել և

վերլուծել է Ս.Սաքանյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման շրջանակներում:
Մասնավորապես, վկայակոչված որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով <<ապացուցման առարկա>> և <<ապացույցների բավարարություն>> հասկացությունները, նշել է. <<(…) եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ինչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:
Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:
Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև երբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե երբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:
Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրել է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝
1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,
2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,
3) անմեղության կանխավարկած՝ (տես Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ կետերը, իսկ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքի, դատավարական որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության, անմեղության կանխավարկածի մասին մանրամասն տես նույն որոշման 16-19-րդ կետերը):
29. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված գործով արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ <<ապացույցների բավարարությունը>> որոշելու չափանիշներն են.
1) անմեղության կանխավարկածը,
2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:
30. Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:
Հարկ է նշել նաև, որ անմեղության կանխավարկածն ամրագրող նորմերը, ինչպես նաև նախադեպային իրավունքը սահմանում են ոչ միայն այդ սկզբունքի բուն էությունը, այլև՝ դրա հաղթահարման, նույնն է, թե անձի մեղավորության հաստատման համար անհրաժեշտ դատավարական չափորոշիչները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը Մ.Հակոբյանի գործով որոշման մեջ շեշտել է. <<(…) ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված>> ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի

վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (…)>> (տես Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը): Անմեղության կանխավարկածի սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել և իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով որոշման մեջ (տես Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքը, ի թիվս այլոց, ենթադրում է մեղադրանքի կողմի պարտականությունը ներկայացնելու անձին դատապարտելու համար բավարար ապացույցներ (տես, ի թիվս այլոց, Barbera Messegue and Jabardo v. Spain, գանգատ թիվ 10590/83, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, 77-րդ կետ, Janosevic v. Sweden, գանգատ թիվ 34619/97, 2002 թվականի հուլիսի 23-ի վճիռ, 97-րդ կետ):

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:>>

ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴՈ-871 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի «...իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու առնչությամբ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի (1-ին մաս) և 21-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր: Այդ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե.

ա) առկա է հանցագործությունը,

բ) կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ,

գ) սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Այստեղ հիմնական հանգամանքն այն է, որ «առկա է հանցագործությունը» եզրույթն արդեն իսկ վկայում է հանցակազմի առկայության մասին, սակայն այն առարկայացված չէ կոնկրետ սուբյեկտի առնչությամբ: Ըստ էության հանցակազմը հանցագործության իրավաբանական բնորոշումն է: Եթե առկա է հանցագործությունը՝ հանցակազմի բոլոր տարրերի առկայությամբ, ապա չի կարող հանցակազմի բացակայության հիմքով գործի վարույթը կարճվել, որովհետև դա ուղղակիորեն կխախտի տուժող կողմի իրավունքները: Իսկ քրեական հետապնդումը կարող է դադարեցվել կասկածյալի կամ մեղադրյալի անձի առնչությամբ»:

Վերոգրյալ ապացույցները վերլուծելու և գնահատելու արդյունքում Դատարանն արձանագրում է, որ.

-առկա է ենթադրյալ հանցագործություն (2016 թվականի մայիսի 23-ին Գուրգեն Մովսիսյանին պատճառվել է որովայնի խոռոչի թափանցող, մեծ ճարպոնի, ստամոքսի պատի վնասումով կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնաս),

-ապացուցված չէ Աբել Ալեքսանյանի մասնակցությունն այդ հանցագործությանը (տուժող Գուրգեն Մովսիսյանի կողմից նախաքննության ընթացքում տրված հակասական ցուցմունքները վերը նշված պատճառաբանություններով չեն կարող կազմել փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջություն),

-սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները (քրեական գործի քննության ընթացքում հարցաքննվել են այդ օրը դեպքի վայրում գտնվող բոլոր վակաները, սակայն Աբել Ալեքսանյանի կողմից Գուրգեն Մովսիսյանին դանակով հարվածելու հանգամանքը հաստատող որևէ այլ տվյալներ ձեռք չեն բերվել):

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ Աբել Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու ու նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու հիմքով:

Դատարանը, նկատի ունենալով, որ ապացուցված չէ Աբել Ալեքսանյանի մասնակցությունը կատարված հանցագործությանը, և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, գտնում է, որ պետք է ճանաչել և հռչակել նրա անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խափանման միջոցը վերացվում

է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:
Դատարանը, նկատի ունենալով, որ վերը նշված հիմնավորումներով պետք է ճանաչել և հռչակել Աբել Մանվելի Ալեքսանյանի անմեղությունը, գտնում է, որ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը վերացել է, ուստի նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պետք է վերացնել:
Դատարանը գտնում է, որ ամբաստանյալից բռնագանձման ենթակա դատական ծախսեր առկա չեն:
Գործով քաղաքացիական հայց չի ներկայացվել:
Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 3-րդ մասով և նկատի ունենալով, որ Աբել Ալեքսանյանի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու պայմաններում, անհայտ է մնում Գուրգեն Մովսիսյանին մարմնական վնասվածք պատճառած անձը, գտնում է, որ սույն դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործը պետք է ուղարկել դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը:
Դատարանը գտնում է, որ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 11.08.2016 թվականի որոշմամբ իրեղեն ապացույց ճանաչված Գուրգեն Մովսիսյանի հագուստներից սև գույնի ջեմպրը, սև ու սպիտակ նախշերով վերնազգեստը, գիշերազգեստը, վերնազգեստը, գոտին և անդրավարտիքը պետք է պահել քրեական գործի հետ և ուղարկել դատախազին:
4. Եզրափակիչ մաս
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 151-րդ, 168-րդ, 309-րդ, 357-360-րդ, 366-րդ, 369-373-րդ հոդվածներով դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Աբել Մանվելի Ալեքսանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել և հռչակել անմեղ ու արդարացնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով:
Աբել Մանվելի Ալեքսանյանին նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, վերացնել:
Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 02.09.2015 թվականի որոշմամբ իրեղեն ապացույց ճանաչված Գուրգեն Մովսիսյանի հագուստներից սև գույնի ջեմպրը, սև ու սպիտակ նախշերով վերնազգեստը, գիշերազգեստը, վերնազգեստը, գոտին և անդրավարտիքը պահել քրեական գործի հետ:
Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
Աբել Մանվելի Ալեքսանյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածներով սահմանված՝ արդարացվածի և նրան պատճառված /հնարավոր/ վնասի հատուցման՝ նրա իրավունքներն ու հատուցման կարգը:
Դատավճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դ Ա Տ Ա Վ Ո Ր Դ. Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն